Վաճառվում է հողամաս, Դիլիջան համայնք, ք.Դիլիջան, Օրջոնիկիձեի փողոց, 5-րդ նրբանցք 13

2026-10-21 10:01:38

Հայտատու	Դիլիջանի համայնքապետարան
Տեսակ	Աճուրդների մասին հրապարակային ծանուցումներ
Հիմք	ՀՀ կառավարության 2023թ.-ի 28 սեպտեմբերի 1667-Ն որոշում

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքը հրավիրում է աճուրդի, որը տեղի կունենա 2026թ. դեկտեմբերի 07-ին, ժամը՝ 11:00-ին https://www.e-auctions.am կայքի միջոցով։
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ավագանու 2026թ. մայիսի 07-ի թիվ 1144-Ա որոշմամբ օտարման ենթակա Դիլիջան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը։
Հասցե՝ Դիլիջան համայնք,
Դիլիջան քաղաք,
Օրջոնիկիձեի փողոց 5-րդ նրբ. 13
հողամաս (վկայական N 06052026–11–0010),
Հողամասի մակերեսը (հեկտար)՝ 0.01067,
* Աճուրդի կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնք (հասցե՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55)։
* Աճուրդի մասնակից կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև համայնքները (բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի),
* Աճուրդի մասնակցության համար Էլեկտրոնային համակարգում (https://www.e-auctions.am/) գրանցվելուց և մուտք գործելուց հետո անհրաժեշտ է e-payments համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 20-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից առնվազն 5 րոպե առաջ վճարել նախավճար։
* էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N1667-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 20-րդ և 21-րդ կետերով։*
* Աճուրդի վերաբերյալ անհրաժեշտ և լրացուցիչ տեղեկատվություն ու

տեխնիկական աջակցություն ստանալու համար Մասնակիցները կարող են զանգահարել 060-70-01-35, 060-70-09-03, հեռախոսահամարներին կամ այցելել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարան ՝ ք. Դիլիջան, Մյասնիկյան 55: Էլեկտրոնային աճուրդի հաղթող մասնակիցը պարտավոր է արձանագրությունն ստորագրելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել լոտի գինն ամբողջությամբ՝ հաշվանցելով նախավճարը՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի համայնքապետարանի 900405051104 հաշվեհամարին:
Կից ներկայացվում է հայտարարությունը:

Հայտարարություն էլաճուրդ.pdf

37460700131

dilijan1@yahoo.com

ԴԻԼԻՋԱՆ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ Փ. 55